«ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑԻԱ» հասարակական կազմակերպություն
<<DEVELOPMENT & INTEGRATION>> NON-GOVERNMENTAL ORGANIZATION

Հայաստան, 0009, Երեւան, Նորք Մարաշ, Արմեն Արմենակյան 2/5, «Սիներջի» Բիզնես կենտրոն, սենյակ 201, հեռ: /37410/ 52 61 10

<<Ինֆորմացիայի ազատության կենտրոն>> ՀԿ իրավաբան,

Գ. Հայրապետյանին

Հասցե: ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ

<<Զարգացում և ինտեգրացիա>> ՀԿ նախագահ

Լ.Խաչատրյանից

Հարգելի պարոն Հայրապետյան,

Ի պատասխան ՀՀ Նախագահի աշխատակազմի ղեկավար Վ.Սարգսյանին ուղղված Ձեր 07.05.2013թ. 200-ի 9 հարցմանը՝ տեղեկացնում եմ, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 2013թ. ապրիլի 4-ին տրամադրված տեղեկանքի մեջ առկա է անճշտություն, քանի որ Ձեր կողմից մատնանշված հասարակական կազմակերպությունները ՀՀ Նախագահի աշխատակազմից ֆինանսավորվել են յուրաքանչյուրը մեկ անգամ, այն է.

1. «Արբանյակ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը 2011թ. առաջին եռամսյակի դրամաշնորհային մրցույթի իրականացման շրջանակներում ճանաչվել է հաղթող և ստացել 14.080.000 (տասչորս միլիոն ութսուն հազար) ՀՀ դրամ դրամաշնորհ «Առողջ ապրելակերպ» ծրագրի իրականացման համար:

Այս ծրագրի նպատակն էր՝ պայքարել դեռահասների և երիտասարդների շրջանում տարածվող ծխախոտային կախվածության դեմ, ինչի համար անհրաժեշտ էր և իրականացվեցին մի շարք ուսուցողական սեմինարներ Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերի դպրոցների և այլ ուսումնական հաստատությունների 8-10-րդ դասարանների աշակերտների համար, որոնց շրջանակներում այդ ոլորտի մասնագետների կողմից ներկայացվեցին ծխախոտի բացասական ազդեցության և հետևանքների վերաբերյալ փաստեր և հետազոտություններ:

2. «Երիտասարդների երկիր» առողջապահական հասարակական կազմակերպությունը 2011թ. երրորդ եռամսյակի դրամաշնորհային մրցույթի իրականացման շրջանակներում ճանաչվել է հաղթող և ստացել 13.709.740 (տասներեք միլիոն յոթ հարյուր ինը հազար յոթ հարյուր քառասուն) ՀՀ դրամ «Ծխելու դեմ պետական ծրագրին աջակցման նախաձեռնություններ» ծրագրի իրականացման համար:

Այս ծրագրի նպատակն էր՝ նպաստել Տավուշի մարզի բնակչության շրջանում ծխելուց հրաժարվելուն և երիտասարդության շրջանում ծխելու կանխարգելմանը, որի համար կազմակերպվեց և իրականացվեց համալիր գործողությունների շարք տարիքային բոլոր խմբերի համար: Կազմակերպված միջոցառումները ուղղված էին օգնելու ամբողջ մարզի բնակչությանը՝ տեղեկանալու ծխախոտի ծխի վնասակար ազդեցության մասին և մեկ անգամ ևս սթափ նայելու սեփական և իրենց հարազատների առողջության պահպանման խնդրին, ինչպես նաև աջակցելու ծխախոտի դեմ պայքարի պետական ծրագրին:

Ի պատասխան Ձեր երկրորդ հարցի՝ հայտնում եմ, որ հասարակական կազմակերպությունների գործունեության մասին տեղեկատվություն դուք կարող եք ստանալ՝ դիմելով համապատասխան լիազոր պետական մարմիններին, նշված ՀԿ-ներին կամ այլ աղբյուրներից:

<<Զարգացում և ինտեգրացիա>>
Հասարակական կազմակերպության
նախագահ՝ Լ.Խաչատրյան

21.05.2013թ.